



Co-funded by the  
Erasmus+ Programme  
of the European Union



**ERASMUS+ CBHE PROJECT # 585760-EPP-1-2017-1-AM-  
EPPKA2-CBHE-JP**

**“Change in Classroom: Promoting Innovative Teaching &  
Learning to Enhance Student Learning Experience in Eastern  
Partnership Countries”, PRINTeL**

Հավելված 1

Հաստատված է  
ԵՊՀ գիտական խորհրդի  
2019թ. փետրվարի 21-ի թիվ 7/4 որոշմամբ

ԵՊՀ գիտական խորհրդի նախագահ  
Ա. Յ. Սիմոնյան  
«21» փետրվարի 2019թ.

**ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ  
ՀԵՏԲՈՒՀԱԿԱՆ ԼՐԱՑՈՒՑԻՉ ԿՐԹՈՒԹՅԱՆ  
ՎԱՐՉՈՒԹՅԱՆ**

**2019 - 2021 ԹԹ.  
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ**

**ԵՐԵՎԱՆ 2019**

## **Բովանդակություն**

<b>1. Նպատակը.....</b>	<b>2</b>
<b>2. Ընդհանուր տեղեկատվություն .....</b>	<b>3</b>
<b>3. Հետբուհական լրացուցիչ կրթության վարչության գործունեության հիմնական ուղղությունները.....</b>	<b>5</b>
<b>3.1. Դասախոսների վերապատրաստման առանձին դասընթացներ և ծրագրեր .....</b>	<b>5</b>
<b>3.2. Մանկավարժական խորհրդատվություն .....</b>	<b>7</b>
<b>3.3. Գիտաժողովներ, աշխատաժողովներ և սեմինարներ .....</b>	<b>8</b>
<b>3.4. Լավագույն փորձի տարածում և խրախուսում .....</b>	<b>8</b>
<b>3.5. Չարգացման ծրագրեր .....</b>	<b>9</b>
<b>3.6. Հրատարակումներ և ուսումնական նյութեր.....</b>	<b>10</b>
<b>4. Կազմակերպում և գործունեություն .....</b>	<b>10</b>
<b>Հավելված 2</b>	
<b>ԵՊՀ դասախոսական կազմի որակավորման բարձրացման ծրագրի կրթական կառուցամասի կառուցվածքը (2016-2021թթ.).....</b>	<b>15</b>
<b>Հավելված 3</b>	
<b>ԵՊՀ դասախոսական կազմի որակավորման բարձրացման ծրագրի վերանայված կրթական կառուցամասի կառուցվածքը (2019-2021թթ.).....</b>	<b>15</b>

## 1. Նպատակը

**Առաքելությունը:** Երևանի պետական համալսարանի հետբուհական լրացուցիչ կրթության վարչության հիմնական գործունեությունը նպատակաուղղված է ԵՊՀ դասախոսների մասնագիտական, մանկավարժական և անձնային որակների շարունակական զարգացմանը, ուսուցման ժամանակակից մեթոդների ու տեխնոլոգիաների ներդրմանը և առաջավոր փորձի տարածմանը:

**Տեսլականը:** ԵՊՀ հետբուհական լրացուցիչ կրթության վարչությունը ձգտում է դառնալ նորարարական կրթական տեխնոլոգիաների առաջատար կենտրոն, որը դասախոսների վերապատրաստման ծրագրերի իրականացման, դասավանդման և ուսումնառության առաջավոր փորձի փոխանակման միջոցով զարգացնում է դասախոսական կազմի մասնագիտական ու մանկավարժական հմտությունները և անձնային որակները:

## 2. Ընդհանուր տեղեկատվություն

Երևանի պետական համալսարանում (այսուհետ՝ ԵՊՀ) դասախոսական կազմի կատարելագործման համակարգը ներդրվել է 1968թ.՝ դասախոսների որակավորման բարձրացման ֆակուլտետի կարգավիճակով: Դասախոսների վերապատրաստումն իրականացվել է ըստ մասնագիտությունների, սկզբում՝ մինչև 500 ժամ ծավալով, իսկ վերջին տասնամյակում՝ 72-100 ժամ: Ծրագրի ավարտին ունկնդիրները պաշտպանել են ավարտական աշխատանք և ստացել վկայական կամ հավաստագիր:

2002թ. ֆակուլտետը վերակազմակերպվել է հետբուհական լրացուցիչ կրթության վարչության (այսուհետ՝ Վարչություն): 2007թ. հունիսի 29-ին գիտխորհրդի կողմից հաստատվել է հետբուհական լրացուցիչ կրթության հայեցակարգը, որը միտված է ԵՊՀ-ում կրթության շարունակականության ապահովմանը: Հայեցակարգը լրացուցիչ կրթության համակարգում որպես գլխավոր ծրագիր է դիտարկել դասախոսների որակավորման բարձրացումը:

Վերջին տասնամյակում ԵՊՀ դասախոսների կատարելագործման ծրագիրը նորովի է մշակվել՝ համալսարանի զարգացման ռազմավարական ծրագրերի դրույթներին համահունչ: 2011 թ.-ից գործողության մեջ է դրվել նոր՝ «Կրեդիտային համակարգով ԵՊՀ դասախոսական կազմի որակավորման բարձրացման կրթագիտական ծրագիրը»: Այն երկփուլ ծրագիր է, որի առանձին շրջափուլերը (2011-2016թթ. և 2016-2021թթ.) միտված են ԵՊՀ դասախոսական կազմի ներուժի զարգացմանը՝ ապահովելով նրա մանկավարժական-հոգեբանական և մասնագիտական հմտությունների շարունակական կատարելագործումը:

ԵՊՀ դասախոսական կազմի որակավորման բարձրացման ծրագրի առանձնահատկություններն են.

1. կրթական և հետազոտական-ուսումնամեթոդական կառուցամասերը՝ պարտադիր և կամընտրական բաղադրիչներով,
2. աշխատածավալի չափումը ECTS կրեդիտներով,
3. ընդհանուր աշխատածավալը՝ 30 կրեդիտ, տևողությունը՝ 5 տարի,
4. ավարտին՝ ունկնդիր դասախոսների վկայագրումը:

Վերապատրաստման ծրագրի արդյունավետությունը և կառավարումն ապահովվելու նպատակով ռեկտորի հրամանով ստեղծվել է համապատասխան խորհուրդ՝ պրոռեկտորների համանախագահությամբ, ինչպես նաև նշանակվել են կրթական ստորաբաժանումների պատասխանատուներ: Պարբերաբար իրականացվող մշտա-դիտարկման արդյունքում անհրաժեշտ փոփոխություններ և լրացումներ են կատարվում ծրագրում: Վարչությունն ունի համապատասխան կայքէջ ([extension.y-su.am](http://extension.y-su.am)):

Վերապատրաստման 10-ամյա նպատակային ծրագիրը դեռևս ընթացքի մեջ է, սակայն արդեն կարելի է ամփոփել որոշակի արդյունքներ.

1. շուրջ 850 դասախոս կատարելագործել է իր մասնագիտական և մանկավարժական հմտությունները,
2. ընդլայնվել է կրթական տարբեր ստորաբաժանումների դասախոսների համագործակցությունը, ինչպես նաև դասավանդման լավագույն փորձի փոխանակումը:

Գործընթացի մշտադիտարկման արդյունքում վեր են հանվել մի շարք հիմնախնդիրներ.

1. դասախոսների վերապատրաստման մոտիվացիայի ցածր մակարդակը,
2. որոշ վերապատրաստողների ոչ բավարար հմտությունները,
3. վերապատրաստման դասընթացների վերջնարդյունքների ոչ ճիշտ ձևակերպումները և դրանցով պայմանավորված՝ գնահատման մեթոդների անհամապատասխանությունը,
4. սկսնակ և փորձառու դասախոսական կազմերի վերապատրաստման կարիքների ոչ հստակ տարանջատումը,
5. նորարարական կրթական տեխնոլոգիաների ոչ բավարար կիրառումը:

Նշված հիմնախնդիրները ներառվել են նաև ԵՊՀ 2016-2020թթ. զարգացման ռազմավարական ծրագրում՝ դրանց լուծման համար նախատեսելով երկու հիմնական միջոցառում (խնդիր 1.2).

1. Ստեղծել դասավանդման և ուսումնառության աջակցման կենտրոն՝ դասախոսական կազմի մանկավարժական կարողություններն ու հմտությունները արդիականացնելու և զարգացնելու նպատակով:
2. Չարգացնել մանկավարժական առաջավոր փորձի խրախուսման և տարածման ներհամալսարանական մեխանիզմները, նպաստել ուսուցման ժամանակակից մեթոդների և տեխնոլոգիաների ներդրմանը:

ԵՊՀ հետբուհական լրացուցիչ կրթության վարչության 2019-2021թթ. գործունեության ծրագիրը միտված է վերոնշյալ հիմնախնդիրների համապարփակ լուծմանը:

### **3. Հետբուհական լրացուցիչ կրթության վարչության գործունեության հիմնական ուղղությունները**

Վարչության գործունեության կարևորագույն ուղղությունը սկսնակ և փորձառու դասախոսական կազմերի վերապատրաստման ծրագրերի իրականացումն է, ինչպես նաև համալսարանում ուսուցման ժամանակակից մեթոդների ու տեխնոլոգիաների ներդրմանը և տարածմանը միտված այլ միջոցառումների իրականացումը: Դրանք են.

- դասախոսների վերապատրաստման առանձին դասընթացներ և ծրագրեր,
- մանկավարժական խորհրդատվություն,
- դասավանդման նորարարական մեթոդների տարածմանն ուղղված գիտա-ժողովների, աշխատաժողովների և սեմինարների կազմակերպում,
- դասավանդման ժամանակակից փորձի ներդրմանը, փոխանակմանը և տարածմանն աջակցող միջոցառումների իրականացում,
- դասախոսների մանկավարժական, մեթոդաբանական ու տեխնոլոգիական հմտությունների զարգացմանը միտված փորձարարական և հետազոտական նախագծերի կատարում,
- դասավանդման և ուսումնառության ժամանակակից մեթոդների ուսուցմանը և տարածմանն ուղղված տարբեր կյանքերի հրատարակում (ուսումնական ձեռնարկներ, ուղեցույցներ և այլն):

#### **3.1. Դասախոսների վերապատրաստման առանձին դասընթացներ և ծրագրեր**

ԵՊՀ-ում 2011թ.-ից գործող դասախոսական կազմի որակավորման բարձրացման ծրագրի յոթուկեսամյա իրականացման արդյունքում բացահայտվել է երկու հիմնական թերություն (հավելված 1).

- նորարարական կրթական տեխնոլոգիաների կիրառման անբավարար մակարդակ,
- դասախոսների ժամանակակից մանկավարժական-մեթոդաբանական կարողությունների ձևավորմանն ուղղված դասընթացների ոչ լիարժեք առկայություն:

Վերոնշյալ թերությունները վերացնելու, ինչպես նաև ծրագիրն արդիականացնելու նպատակով առաջարկվում է դասախոսների վերապատրաստման գործող ծրագրի որոշ կրթամասերում կատարել հետևյալ փոփոխությունները.

3.1.1. Գործող ծրագրի ընդհանուր պատրաստության կրթամասում ներմուծել «Ուսուցման նորարարական մեթոդներ» մոդուլը (հավելված 2, մոդուլ 1.3): Վերջինս ընդգրկում է հետևյալ 5 դասընթացները՝ 1-ական կրեդիտ աշխատաժամայով (10 ժամ լսարանային + 20 ժամ ինքնուրույն աշխատանք).

1. Համագործակցային ակտիվ ուսուցում լսարանում,
2. Ակտիվ ուսուցում և թվային տեխնոլոգիաները դասավանդման գործընթացում՝ մոբայլ ուսումնառություն և խաղայնացում,
3. Տեսանյութերը որպես դասավանդման գործիք,
4. Ակտիվ ուսուցում «շրջված դասարանում»,
5. Համակցված դասավանդում և ուսուցում:

3.1.2. 4-րդ՝ «Ընդհանուր կամընտրական դասընթացներ» կրթամասի «Առցանց ուսուցման տեխնոլոգիաներ» բաղադրիչը ներառել 1-ին կրթամասի 1.2 մոդուլում:

3.1.3. 5-րդ կրթամասում ներառել նոր բաղադրիչ՝ «Դասավանդում արտերկրի առաջատար բուհերում» (օրինակ՝ «Մասնակցություն Erasmus+ Staff Training Mobility ծրագրին» (յուրաքանչյուր դասընթացի համար (առնվազն 10 ժամ)՝ 1 կրեդիտ):

3.1.4. Ծրագրում դեռևս չընդգրկված դասախոսների վերապատրաստումը կազմակերպել ըստ ծրագրի վերանայված կրթական կառուցամասի 2019/2020 ուստարվանից՝ այն տարբերակելով սկսնակ և փորձառու դասախոսների համար:

3.1.5. Սկսնակ դասախոսների համար պարտադիր են ծրագրի հետևյալ բաղադրիչները (հավելված 2)՝ 6 կրեդիտ ընդհանուր աշխատաժամայով.

ա) ՏՀՏ կամընտրական դասընթացներից՝ 1 (մոդուլ 1.2).

Առցանց ուսուցման տեխնոլոգիաներ չ3 կրեդիտ),

բ) «Ուսուցման նորարարական մեթոդներ» 1.3. մոդուլից՝ 2 դասընթաց.

Ակտիվ ուսուցում «շրջված դասարանում» (1.3.4),

Համակցված դասավանդում և ուսուցում (1.3.5).

գ) «Մանկավարժական-հոգեբանական պատրաստություն»

կրթամասից՝ Դասավանդման, ուսումնառության և գնահատման հիմունքները չ1 կրեդիտ):

3.1.5.1. Ձեռնարկել համապատասխան միջոցներ սկսնակ դասախոսների համար 3.1.5. ենթակետի պարտադիր կրթական բաղադրիչները «ԵՊՀ-ում հետազոտողի պատրաստման գիտակրթական ծրագրի» ուսումնական կառուցամասում որպես պարտադիր մոդուլ ներառելու ուղղությամբ (2019/2020 ուստարվանից):

3.1.6. Փորձառու դասախոսների համար «Ուսուցման նորարարական մեթոդներ»-ից 2 դասընթաց կամընտրական են 2019-2021թթ., իսկ 2021-2026թթ. վերապատրաստման նոր ծրագրում պարտադիր:

3.1.7. Վերապատրաստման դասընթացների գնահատման և շարունակական բարելավման նպատակով գործադրել հետադարձ կապի արդյունավետ մեխանիզմներ (հարցումներ, ֆոկուս-խմբեր և այլն), ինչպես նաև իրականացնել գործընթացի մշտադիտարկում:

3.1.8. Դասախոսների որակավորման բարձրացման վերանայված ծրագրով 2019թ. ընթացքում վերապատրաստել առնվազն 200 դասախոսի:

## **3.2. Մանկավարժական խորհրդատվություն**

Վարչության հիմնական նպատակներից է դասախոսական կազմի համագործակցությանը և գիտելիքների, հմտությունների ու դասավանդման առաջավոր փորձի փոխանակմանն օժանդակելը, ինչպես նաև հաղորդակցման համապատասխան միջավայր ստեղծելը: Նշված նպատակներն իրականացվելու են խորհրդատուների ինստիտուտի օգնությամբ՝ հետևյալ գործողությունների միջոցով:

- 3.2.1. Խորհրդատուների կազմը ձևավորել վերապատրաստողներից և ծրագրին առավել ակտիվ մասնակցող դասախոսներից:
- 3.2.2. Խորհրդատուների ֆինանսական խրախուսման նպատակով նրանց ուսումնական բեռնվածության մեջ ներառել համապատասխան չափաբաժին (0,25 դրույք):
- 3.2.3. Սահմանել խորհրդատվության հետևյալ թեմաները.
  - կրթական ծրագրի-մասնագրի կազմում,
  - կրթական վերջնարդյունքների ձևակերպում,
  - դասընթացի օրացուցային պլանի (աշխատանքային ծրագրի) կազմում,
  - ուսուցման նորարարական ձևերի կիրառում (ակտիվ, խմբային, պրոբլեմաուղղորդված և այլն),
  - ուսուցման կառավարման էլեկտրոնային համակարգերի օգտագործում,
  - մանկավարժական-հոգեբանական հմտությունների զարգացում,
  - խորհրդատվություն դասախոսների և ուսանողական հարցումների ամփոփման արդյունքում:
- 3.2.4. Վեր հանել դասախոսների խորհրդատվական կարիքները՝ իրականացնելով համապատասխան աշխատանքներ.
  - ա) հանդիպումներ կրթական ստորաբաժանումներում,
  - բ) դասախոսների խորհրդատվության հայտերի ընդունում էլեկտրոնային կարգով՝ մշակված ձևաթղթով,
  - գ) դասախոսների շրջանում հարցումների իրականացում, հարցումների և հայտերի համադրում,
  - դ) խորհրդատվության ժամերի սահմանում:



3.2.5. Ստեղծել տեղեկատվական-մեթոդական նյութերի և էլեկտրոնային ռեսուրսների շտեմարան:

### **3.3. *Գիտաժողովներ, աշխատաժողովներ և սեմինարներ***

Վարչության գործունեության այս ուղղությունը կոչված է լուծելու հետևյալ խնդիրները.

- դասավանդման լավագույն փորձի փոխանակում և տարածում,
- գերազանցության կրթական մոդելների ներկայացում,
- ուսուցման նորարարական մեթոդների կիրառմանն առնչվող հարցերի քննարկում,
- զարգացման տարբեր նախագծերի արդյունքների տարածում,
- մանկավարժական խորհրդատվության տարբեր խնդիրների հանրայնացում:

Վերոնշյալ խնդիրների լուծման նպատակով նախաձեռնել հետևյալ միջոցառումները.

3.3.1. Կազմակերպել նորարարության և դասավանդման լավագույն փորձի տարածման հանրապետական ամենամյա համաժողով (գիտաժողով), արդյունքները հրատարակել առանձին ժողովածուով: Գիտաժողովները կազմակերպել 2020թ.-ից:

3.3.2. Կազմակերպել ներհամալսարանական աշխատաժողովներ և սեմինարներ՝ միտված նորարարական մեթոդներով ուսուցման հմտությունների ձևավորմանը և զարգացմանը: Աշխատաժողովը կամ սեմինարը կազմակերպել առնվազն կիսամյակը մեկ անգամ՝ սկսած 2019/20 ուստարվանից՝ ԵՊՀ-ում նպատակային վերապատրաստումներն ավարտելուց հետո:

3.3.3. Խրախուսել գիտաժողովների, աշխատաժողովների և սեմինարների մասնակիցներին (կրեդիտների հատկացում, շնորհակալագրեր կամ խրախուսման այլ ձևեր):

3.3.4. Միջոցառումների արդյունքներն ամփոփել և տեղադրել Վարչության կայքէջում:

### **3.4. *Լավագույն փորձի տարածում և խրախուսում***

Ուսուցման գործընթացում նորարարական կրթական տեխնոլոգիաների լիարժեք կիրառումը ԵՊՀ-ում համապատասխան կրթական միջավայրի և հաղորդակցման մշակույթի ձևավորման անհրաժեշտություն է առաջացնում: Այդ նպատակին են ուղղված հետևյալ գործողությունները.

3.4.1. **Ստեղծել դասավանդման և ուսումնառության վիրտուալ ակադեմիա:** Այն շահագրգիռ բոլոր խմբերին հնարավորություն կընձեռի առցանց հաղորդակցվելու դասավանդման և ուսումնառության խնդիրների շուրջ: Մինչև 2019թ. ավարտը կմշակվի

վիրտուալ հարթակի աշխատանքային քաղաքականությունը, իսկ հարթակի գործառույթյան մեկնարկը կտրվի 2020թ.-ին:

**3.4.2. Ձևավորել դասախոսների ոչ ֆորմալ հանրույթներ:** Ծրագրում ընդգրկված դասախոսները ստեղծելու են մասնագիտական առնվազն հինգ հանրույթներ՝ ըստ դասավանդման և ուսումնառության կոնկրետ ձևերի ու մեթոդների.

1. Համագործակցային ակտիվ ուսուցում լսարանում,
2. Ակտիվ ուսուցում և թվային տեխնոլոգիաները դասավանդման գործընթացում՝ մոբայլ ուսումնառություն և խաղայնացում,,
3. Տեսանյութերը որպես դասավանդման գործիք,
4. Ակտիվ ուսուցում «շրջված դասարանում»,
5. Համակցված դասավանդում և ուսուցում:

Յուրաքանչյուր հանրույթ կունենա իր մոդերատորը, որը կուղղորդի հարթակի քննարկումները:

**3.4.3. Կազմակերպել աշխատաժողովներ և սեմինարներ նորարարական կրթական տեխնոլոգիաներով դասավանդման հիմնախնդիրների վերաբերյալ:**

**3.4.4. Սահմանել նորարարական դասավանդման խրախուսման հետևյալ միջոցները.**

- «ԵՊՀ աշխատողներին աշխատանքի որոշ տեսակների կատարման համար վճարվող լրավճարների հաշվարկման և վճարման կարգով» նախատեսված լրավճար ուսուցման նորարարական մեթոդներով դասավանդելու համար:
- «Լավագույն նորարար դասախոս» ամենամյա մրցույթ՝ տարբերակված անվանակարգերով:

### **3.5. Չարգացման ծրագրեր**

Վարչության գործառույթների մեջ ներառել նաև դասախոսների որակավորման բարձրացմանն ուղղված զարգացման նախագծերի հայտագրումը և իրականացումը, մասնավորապես.

3.5.1. Շարունակել և ընդլայնել ներգրավվածությունը միջազգային այն ծրագրերում, որոնք միտված են Վարչության կարողությունների հզորացմանը, դասավանդողների մասնագիտական և մանկավարժական հմտությունների զարգացմանը և նորարարական մեթոդների ներդրմանը:

3.5.2. Մշակել Եվրոպական հանձնաժողովի կողմից ֆինանսավորվող նոր նախագիծ՝ միտված դասախոսների դասավանդման սերտիֆիկատային ծրագրերի և համապատասխան շրջանակի ներդրմանը ԵՊՀ-ում:

### **3.6. Հրատարակումներ և ուսումնական նյութեր**

Մշակել, հրատարակել ու տարածել ուսումնական տպագիր և էլեկտրոնային նյութեր.

- ա) ներդրված նորարարական մեթոդների վերաբերյալ ուսուցողական և տեղեկատվական բուկլետներ,
- բ) նորարարական մեթոդներով դասավանդման ձեռնարկ (մինչև 2020թ.),
- գ) պարբերական հրատարակություն, որտեղ կներկայացվեն՝
  - գիտաժողովների, աշխատաժողովների և սեմինարների արդյունքներն ամփոփող նյութերը,
  - խորհրդատուների առավել ուշագրավ դիտարկումները,
  - դասավանդմանն առնչվող հետազոտությունների արդյունքները և փորձը,
  - ՀՀ և եվրոպական գործընկեր համալսարանների՝ ոլորտին վերաբերող նորությունները:

## **4. Կազմակերպում և գործունեություն**

Համալսարանում որակավորման բարձրացման և վերապատրաստման կրթական ծրագրերն իրականացվում են Վարչության կողմից: Վարչությունը ղեկավարում է պետը՝ ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորի համակարգմամբ:

### **4.1. Կառուցվածքը**

Վարչությունն ունի երկու բաժին՝ դասախոսների որակավորման բարձրացման և մասնագիտական վերապատրաստման:

Առաջին բաժինն իրականացնում է դասախոսական կազմի որակավորման բարձրացման ծրագիրը: Ծրագրի իրականացման աշխատանքները համակարգում է համապատասխան խորհուրդը, որի նիստերը գումարվում են տարեկան երկու անգամ: Խորհրդի կազմում ընդգրկված են որակի ապահովման կենտրոնի (այսուհետ՝ ՈԱԿ) տնօրենը, վարչության պետը, բաժնի վարիչը և խորհրդատուները (դասախոս-փորձագետները)՝ ԵՊՀ ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորի նախագահությամբ: Խորհուրդը պլանավորում ու համակարգում է կառավարման և ռազմավարական զարգացման աշխատանքները:

Ծրագրի իրականացման աշխատանքները վերապահված են Վարչությանը.

- Վարչությունը կազմակերպում և իրականացնում է առօրյա գործունեությունը,

ինչպես նաև ապահովում է կապը ծրագրի մասնակիցների հետ:

- Խորհրդատուները՝ ՈԱԿ-ի աջակցությամբ, մշակում են դասընթացների բովանդակությունն ու մեթոդաբանությունը:

Վարչության ենթակառուցվածքը ներառում է ակտիվ ուսուցման 3 լաբորատորիա և տեսադասախոսությունների պատրաստման 1 աուդիո- և վիդեոստուդիա:

## **4.2. Պաշտոնների անձնագրերը**

Վարչության, այդ թվում բաժինների, գործառույթները և աշխատակիցների պարտականությունները սահմանվում են Վարչության կանոնադրությամբ և պաշտոնների անձնագրերով:

1. Վարչության պետը կազմակերպում է վերապատրաստման ծրագրերի մշակման աշխատանքները և վերահսկում դրա իրականացումը:
2. Բաժնի վարիչը կազմակերպում է բաժնի ընթացիկ աշխատանքները:
3. Բաժնի աշխատակիցները՝
  - 3.1. ապահովում են դասընթացների իրականացումը և տեխնիկական սպասարկումը,
  - 3.2. ընդունում են դասախոսների վերապատրաստման կարիքների վերաբերյալ հայտերը (այդ թվում՝ մանկավարժական), ապահովում տեղեկատվության հասանելիությունը, կազմակերպում հանդիպումներ և տարածում դրանց արդյունքները,
  - 3.3. նախապատրաստում և խմբագրում են գիտաժողովների, աշխատաժողովների, սեմինարների ու հրատարակումների նյութերը,
  - 3.4. ապահովում են ծրագրի հեռակառավարումը, կազմակերպում են Վիրտուալ հարթակը, պատրաստում հեռահաղորդակցության էլեկտրոնային նյութերը, պարբերաբար թարմացնում Վարչության կայքէջը:
4. Ծրագրում ընդգրկված դասախոս-փորձագետները՝
  - 4.1. վարում են դասընթացները,
  - 4.2. տրամադրում մանկավարժական խորհրդատվություն,
  - 4.3. ՈԱԿ-ում և կրթական ստորաբաժանումներում անցկացնում քննարկումներ,
  - 4.4. վարում են գիտաժողովներ, աշխատաժողովներ և սեմինարներ,
  - 4.5. ուղղորդում են վիրտուալ հարթակում հարցերի քննարկումը, ինչպես նաև դասավանդման և ուսումնառության նորարարական և տեխնոլոգիա-պես հազեցած ժամանակակից մեթոդների վերաբերյալ հրատարակումների նախապատրաստական աշխատանքները:

### **4.3. Համագործակցություն**

ԵՊՀ դասախոսական կազմի վերապատրաստման ծրագրում կարևորվում է բոլոր մասնակիցների և շահակիցների համագործակցությունը: Այս ոլորտում նախանշվում են հետևյալ գործողությունները.

- 4.3.1. Վարչությունը ծրագրին ու դասընթացներին առնչվող հարցերով հաղորդակցվում է ԵՊՀ կրթական ստորաբաժանումների հետ և ապահովում նրանց հետադարձ կապը: Վարչությունն այս նպատակով ակտիվորեն օգտագործում է կայքէջը և տպագիր հրատարակումները`
- պարբերաբար թարմացնում է կայքէջը,
  - բաժանորդագրում է նորություններին,
  - գլխավոր նորությունները տեղադրում է ԵՊՀ պորտալում,
  - ստեղծում և տարածում է բուկլետներ նոր դասընթացների վերաբերյալ:
- 4.3.2. Համապատասխան հարցումների միջոցով վերհանվում են դասախոսների վերապատրաստման կարիքները` տեղեկատվության վերլուծությունն օգտագործելով դասընթացների բովանդակության և մեթոդների լրամշակման, ինչպես նաև դասավանդողների ընտրության և կատարելագործման համար:
- 4.3.3. Նոր դասընթացների ներդրման հարցը քննարկում է ծրագրի խորհուրդը:

### **4.4. Որակի ապահովում**

Վարչությունն իրականացնում է մատուցվող առանձին դասընթացների, ամբողջական ծրագրի և տարբեր ծառայությունների որակի ապահովման գործառույթներ.

- 4.4.1. վերապատրաստման դասընթացների մշակման գործընթացի և ներկայացման ձևաչափի համապատասխանեցում ԵՊՀ-ում ընդունված չափանիշներին,
- 4.4.2. դասընթացների և վերապատրաստման ծրագրերի պարբերական գնահատում հարցումների միջոցով` առցանց և թղթային եղանակով,
- 4.4.3. տարբերակված հարցաթերթիկների մշակում ըստ ոլորտների.
- դասընթացներ և վերապատրաստման ծրագրեր,
  - խորհրդատվական գործունեություն,
  - գիտաժողով, աշխատաժողով և սեմինար,
  - Վարչության աշխատակազմի գործունեություն:

Հարցումների արդյունքները վերլուծվում, և ամփոփվում են համապատասխան զեկույցներում, իսկ եզրակացություններն օգտագործվում են ծրագրի տարբեր բաղադրիչներն ու գործընթացները բարելավելու նպատակով:

#### **4.5. Կարողությունների զարգացում**

Վարչության անձնակազմի հմտությունների և կարողությունների շարունակական զարգացման նպատակով նախատեսվում են մի շարք գործողություններ.

4.5.1. Վարչության 2019-2021թթ. գործունեության ծրագրում կատարված փոփոխություններն ու լրացումները արտացոլել աշխատակիցների պաշտոնների անձնագրերում:

4.5.2. Վեր հանել Վարչության աշխատակիցների մասնագիտական կարիքները և ըստ այդմ պլանավորել նրանց մասնագիտական զարգացման գործընթացն ու անհրաժեշտ հմտությունների ձևավորումը:

- Կազմակերպել համապատասխան սեմինարներ աշխատակիցների համար՝ աշխատակարգերի և փաստաթղթերի մշակման, ինչպես նաև ծրագրի առանցքային հարցերի քննարկման նպատակով:
- Պլանավորել աշխատակիցների վերապատրաստման գործողությունները (դասընթաց, գիտաժողով, հետազոտական նախագծեր և այլն):
- Համագործակցել ՀՀ այլ բուհերի վերապատրաստման կառույցների հետ, ծանոթանալ միջազգային առաջատար համալսարանների նմանատիպ փորձին:

#### **4.6. Միջազգային հարաբերություններ**

Համալսարանը լայնորեն ներգրավված է միջազգային ծրագրերում և հանդիսանում է համալսարանական միջազգային մի շարք ասոցիացիաների անդամ: ԵՊՀ միջազգային համագործակցության վարչության միջոցով պայմանագրեր ու համաձայնագրեր են կնքվել աշխարհի շուրջ 50 երկրների 200-ից ավելի համալսարանների և հետազոտական հաստատությունների հետ: Իրականացվում են դասախոսների և ուսանողների փոխանակումներ, կրկնակի դիպլոմով, հեռավար ուսուցման և այլ ծրագրեր: ԵՊՀ-ն ակտիվորեն մասնակցում է Erasmus+-ի ծրագրերին, համակարգում է PRINTeL նախագիծը:

Միջազգային տարբեր նախագծերի շրջանակներում նախատեսվում է խորացնել կապերը գործընկեր մի շարք հաստատությունների հետ՝ պայմանագրեր կնքելով Պորտոյի, Բարսելոնայի, Գրացի կիրառական գիտությունների, Լինչոպինգի ու Լյուվենի կաթոլիկ համալսարանների հետ, և շարունակել համագործակցությունը, մասնավորապես դասախոսների կատարելագործման ուղղությամբ:

Նախատեսվում է նաև անդամակցել դասախոսների մասնագիտական և մանկավարժական կարողությունների զարգացման ուղղությամբ մասնագիտացած միջազգային կազմակերպությունների և ընկերակցությունների:

**ԵՊՀ դասախոսական կազմի որակավորման բարձրացման ծրագրի կրթական կառուցամասի կառուցվածքը (2016-2021թթ.)**

Հ/հ	Կրթական կառուցամասի մոդուլները
<b>1.</b>	<b>Ընդհանուր պատրաստություն</b>
1.1.	<i>Անզլերենը ակադեմիական միջավայրում</i>
1.2.	<i>Տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաներ (ՏՀՏ)</i>
1.2.1.	<i>Կամրնտրական դասընթացներ</i>
<b>2.</b>	<b>Մանկավարժական-հոգեբանական պատրաստություն</b>
2.1.	<i>Դասավանդման, ուսումնառության և գնահատման հիմունքները</i>
2.2.	<i>Կամրնտրական դասընթացներ</i>
<b>3.</b>	<b>Մասնագիտական պատրաստություն</b>
3.1.	<i>Մասնագիտության արդի հիմնախնդիրները</i>
3.2.	<i>Կամրնտրական դասընթացներ</i>
<b>4.</b>	<b>Ընդհանուր կամրնտրական դասընթացներ</b>
4.1.	<i>Առցանց ուսուցման տեխնոլոգիաներ</i>
<b>5.</b>	<b>Որակավորման բարձրացման այլ ձևեր</b> (վերապատրաստում, ստաժավորում, ամառային դպրոց և այլն)

**ԵՊՀ դասախոսական կազմի որակավորման բարձրացման ծրագրի վերանայված կրթական կառուցամասի կառուցվածքը (2019-2021թթ.)**

Հ/հ	Կրթական կառուցամասի մոդուլները
<b>1.</b>	<b>Ընդհանուր պատրաստություն</b>
1.1.	<i>Անզլերենը ակադեմիական միջավայրում</i>
1.2.	<i>Տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաներ (ՏՀՏ)</i>
1.2.1.	<i>Կամրնտրական դասընթացներ</i>
1.2.1.1.	<i>Առցանց ուսուցման տեխնոլոգիաներ</i>
<b>1.3.</b>	<b>Ուսուցման նորարարական մեթոդներ</b>
1.3.1.	<i>Համագործակցային ակտիվ ուսուցում լսարանում</i>
1.3.2.	<i>Ակտիվ ուսուցում և թվային տեխնոլոգիաները դասավանդման գործընթացում մոբայլ ուսումնառություն և խաղայնացում</i>
1.3.3.	<i>Տեսանյութերը որպես դասավանդման գործիք</i>
1.3.4.	<i>Ակտիվ ուսուցում «շրջված դասարանում»</i>
1.3.5.	<i>Համակցված դասավանդում և ուսուցում</i>
<b>2.</b>	<b>Մանկավարժական-հոգեբանական պատրաստություն</b>
2.1.	<i>Դասավանդման, ուսումնառության և գնահատման հիմունքները</i>
2.2.	<i>Կամրնտրական դասընթացներ</i>
<b>3.</b>	<b>Մասնագիտական պատրաստություն</b>
3.1.	<i>Մասնագիտության արդի հիմնախնդիրները</i>
3.2.	<i>Կամրնտրական դասընթացներ</i>
<b>4.</b>	<b>Ընդհանուր կամրնտրական դասընթացներ</b>
<b>5.</b>	<b>Որակավորման բարձրացման այլ ձևեր</b> (վերապատրաստում, ստաժավորում, ամառային դպրոց, դասավանդում արտերկրի առաջատար բուհերում և այլն)